ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/103

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2024 թ. N 103

ՍԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «**Սևանի պետական բազմագործառութային քոլեջ**» **ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Սևան, Նաիրյան 162

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. ապրիլի 27-ին քննարկեց **«Սևանի պետական բազմագործառութային քոլեջ» ՊՈԱԿ-ի** (այսուհետ՝ ՍԲՊՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	13 հունվարի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում	05 մայիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	16-19 հոկտեմբերի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	20 փետրվարի 2024թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	21 մարտի 2024թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Սևանի պետական բազմագործառութային քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ՍԲՊՔ-ն իրականացնում է իր առաքելությանը համապատասխան և աշխատաշուկայում պահանջարկ վայելող ՄԿԾ-ներ: Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար կարևորվում է տարածաշրջանային առանձնահատկությունները: Բոլոր կրթական ծրագրերը կազմված են պետական կրթական չափորոշիչների համաձայն, մոդուլային ծրագրերում առանձնացված են վերջնարդյունքները: Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական և ամրագրված քաղաքականություն քոլեջում առկա չէ, սակայն դասախոսական կազմը դասապրոցեսի ընթացքում կիրառում է արդյունքահեն և ինտերակտիվ մեթոդներ, որոնք առավել ընդունված են ուսանողների կողմից: Ուսանողներին տրվում են կարողություններ ձևավորող, ինքնուրույն, վերլուծական մտածողություն զարգացնող առաջադրանքներ, որոնք երբեմն վերցված են գործատուների կողմից առաջադրվող խնդիրներից: Առկա է գործատուների հետ համատեղ կրթական ծրագիր մշակելու դրական փորձ: Ուսումնառության նյութերի տրամադրման համար օգտագործում են նաև առցանց հարթակներ՝ ուսանողները կարողանում են ցանկացած պահի և ցանկացած վայրում, ուսումնասիրել նոր նյութը, կատարել հանձնարարությունները: Իրականացվում են ՄԿԾ-ների մշտադիտարկումներ և բարելավումներ, կրթական գործընթացները ճկուն են և արագ արձագանքում են շուկայի փոփոխություններին:

ՍԲՊՔ-ն իր մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, արդյունավետ գործող դասախոսների ընտրության մրցութային կարգ:

ՍԲՊՔ-ի դասավանդողների մեծ մասը հիմնական աշխատողներ են, քոլեջը ներգրավել է նաև ոլորտի պրակտիկ մասնագետներ: ՄՈՒՀ-ն ունի կադրային ռեզերվ, կարողանում է կառավարել հոսունությունը և ապահովել դասախոսական կազմի կայունությունը: Առկա են դասախոսի

արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ: Նոր մասնագիտության ներդրմամբ պայմանավորված աշխատակազմը համալրվել է երիտասարդ կադրերով, ովքեր նաև պրակտիկ ոլորտի մասնագետներ են և անմիջական կապ են ստեղծում աշխատաշուկայի և քոլեջի կրթական ծրագրերի միջև:

Քոլեջի ռեսուրսային բազան ոչ ամբողջությամբ է բավականացնում ՄԿԾ-ների լիարժեք իրականացմանը: Բյուջեն հիմնականում ձևավորվում է ուսանողների վարձավճարներից, վերջին տարիներին ՄՈՒՀ-ի ծախսերը գերազանցում են ստացված եկամուտը: Շենքային պայմաններն ունեն հիմնային բարելավման կարիք, առկա չէ լոկալ ջեռուցման համակարգ: Հանրակրթական առարկաների շրջանակներում եղած լաբորատոր նյութերն արդյունավետորեն չեն կիրառվում: Գրադարանը համալրման և արդիականացման կարիք ունի: ՄՈՒՀ-ն ունի անվտանգ միջավայր ձևավորելու խնդիր:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը***

Սևանի բազմագործառութային պետական քոլեջը ստեղծվել է 2018 թ.-ին «Սևանի պետական քոլեջ» և «Սևանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ների միաձուլման արդյունքում: Միաձուլումը, սակայն, հիմնականում սահմանափակվում է մեկ տնօրենի կողմից ընդհանուր կառավարմամբ. բովանդակային, կառուցվածքային կամ գործընթացների արդյունավետության բարձրացմանն ուղղված փոփոխություններ տեղի չեն ունեցել:

ՄՈՒՀ-ի կառավարումը դեռևս արդյունքահեն, տվյալահեն չէ, առավելապես իրավիճակային է: ՌԾ-ն նկարագրական է, բացակայում են գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ), երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումներն ամբողջությամբ համադրելի չեն: Երկու կրթական գործընթացների՝ միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական), միջև համագործակցությունը պասիվ է: Առկա չէ կառավարման արդյունավետ կառուցվածք և եկամուտների ավելացման այլընտրանքային միջոցներ: Կառավարման մակարդակում ՊԻԳԲ շրջափուլը լիարժեքորեն չի գործարկվում, բարելավումների հիմքում դրված չեն վերլուծված հավաստի տվյալներ: ՈԱ համակարգը դեռևս ձևավորման փուլում է, համակարգի առջև դրված խնդիրներն ամբողջովին չեն արտահայտվում աշխատանքային պլաններում: Առկա չէ հարցումների իրականացման հստակ մեթոդաբանություն, տվյալների հավաքագրման մեխանիզմները դեռևս անկատար են և էական ազդեցություն չունեն որոշումների կայացման վրա: ՈԱ մշակույթը հավասարաչափ տարածված չէ քոլեջում: Գործընթացները չեն իրականացվում ՊԻԳԲ շրջափուլով:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

ՍԲՊՔ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընդունելության հստակ մեխանիզմներ: Առկա են ուսանողների կարիքների վերհանման գործիքակազմ, ուսանողներնը իրենց հուզող հարցերով կարող են ցանկացած պահի ստանալ օժանդակություն: Նրանց տրվող հանձնարարականները կարողություններ և հմտություններ ձևավորող են: Առկա են կրթական խորհրդատվական և կարիերային նպաստող ծառայություններ, գործում է ՈՒսանողական խորհուրդ:

ՄՈՒՀ-ում ներդրված է արտաքին և ներքին հաշվետվողականության համակարգ՝ ըստ հիերարխիկ կապերի: Հաշվետվությունների ներկայացման միասնական ձևաչափ ներդրված չէ, հաշվետվությունները վերլուծական չեն և չեն նպաստում բարելավման ենթակա կողմերի բացահայտմանը: Քոլեջի գործընթացների տեսանելիության և թափանցիկության նպատակով առկա է

ֆեյսբուքյան էջ, գործում են հետադարձ կապի և հասարակությանը գիտելիքեր և արժեքներ փոխանցելու որոշ մեխանիզմներ:

2024-2029 թթ. ՌԾ-ում հետազոտությունը դիտարկվել է որպես առաջնահերթություն: ՍԲՊՔ-ում կարևորվում է հետազոտական և վերլուծական աշխատանքների իրականացումը և դրանց կապը ՄԿԾ-ների հետ: Ուսանողներին տրվող առաջադրանքները նպաստում են վերլուծող և հետազոտող կարողություններով մասնագետների պատրաստմանը:

ՄՈՒՀ-ն ունի գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության լայն շրջանակ, որը նպաստում է կրթական ծրագրերի բարելավմանը, գործնական պարապմունքների և պրակտիկաների անխափան կազմակերպմանը: Առկա է գործատուի հետ միասնական կրթական ծրագիր իրականացնելու լավ փորձ: ՄՈՒՀ-ն ունի միջազգային ծրագրերի մասնակցության փորձառություն, արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների զարգացման համար քոլեջը համագործակցել է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ ունենալով միջազգային գործուղումներ, վերապատրաստումներ և ռեսուրսների բարելավումներ: Որոշակի քայլեր են իրականացվում ներքին շահակիցների շրջանում օտար լեզուների զարգացման ուղղությամբ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Սևանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

   Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - հաջորդ ռազմավարական պլանում յուրաքանչյուր նպատակի համար արդյունավետության գնահատման որակական և քանակական ցուցանիշներ, առավել հստակ ժամանակացույց սահմանելու անհրաժեշտությանը,
   - համատեղ կրթական ծրագիր մշակելու լավ փորձի տարածմանը բոլոր ՄԿԾ-ներում,
   - ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջ ունենալու անհրաժեշտությանը,
   - դասախոսների և ուսանողների օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը,
   - տվյալների հավաքագրման և մշակման մեխանիզմների բարելավմանը,
   - դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի պլանավորման և ապահովման, հետազոտական աշխատանքների իրականացման խրախուսման մեխանիզմների ներդրմանը,
   - միջազգային փորձի ուսումնասիրման և համագործակցությունների հաստատման մեխանիզմներ և գործիքակազմ ունենալու անհրաժեշտությանը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «**Սևանի պետական բազմագործառութային քոլեջ**» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2024 թ. ապրիլի 27
ք.Երևան